

Մասնագիտության նկարագիր	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Փականագործ՝ գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման»
I. Դերը	Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման եվ նորոգման փականագործը (գազափականագործը) կատարում է ներտնային գազամատակարարման համակարգի և արդյունաբերական գազ օգտագործող սարքավորումների ու դրանց համակարգերի չափանշում, հավաքակցում (մոնտաժում), տեղակայում, փորձարկում, շահագործում, սպասարկում, ստուգում, ապահովակցում (ապամոնտաժում), ընթացիկ նորոգում և հիմնանորոգում:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Գազափականագործական աշխատանքների կազմակերպում և ղեկավարում	
Աշխատանքային գործընթացը	Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման փականագործը (գազափականագործը) մշակում է աշխատանքային ընթացիկ ծրագրեր, նախապատրաստում, կազմակերպում և ղեկավարում է իրեն վստահված նորոգման բրիգադի աշխատակիցների աշխատանքային գործունեությունն ու կարգապահությունը, հստակեցնում է նրանցից յուրաքանչյուրի գործառույթների շրջանակը:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • կազմված են աշխատանքային ընթացիկ ծրագրերը. • հաշվի են առնված ենթակա նորոգման բրիգադի աշխատակիցների մասնագիտական փորձառությունն ու կարողությունները. • հանձնարարականները ձևակերպված են հստակ և հասկանալի. • աշխատանքային ռեսուրսներն ու աշխատաժամանակը

	<p>բաշխված են արդյունավետ.</p> <ul style="list-style-type: none"> • աշխատանքն իրականացված է համաձայն ծրագրված պայմանների, որակի և ժամանակի. • հաշվի են առնված աշխատանքային նորարարական մեթոդներն ու առաջարկությունները, • լիարժեք կատարված են կարգազիր թույլտվությունում նախատեսված աշխատանքների անվտանգ կատարման անվտանգության միջոցառումները:
--	--

Խնդիրների բնագավառ 2. Գազափականագործական աշխատանքների վերջնարդյունքի որակի հսկում

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման փականագործը (գազափականագործը) հսկում է գազափականագործական աշխատանքներում կիրառվող մեթոդները և տեխնոլոգիաները, ճշգրտում է աշխատանքային սարքավորումների ու գործիքների, ինչպես նաև անհրաժեշտ հարակից այլ նյութերի տեսականին, հաշվարկում է դրանցից յուրաքանչյուրի համար պահանջվող քանակը՝ զուգընթաց վերահսկելով աշխատանքային պայմանների և աշխատատեղերի սանիտարահիգիենիկ նորմերը, գործիքների ու մեքենա-սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, իրեն ենթակա նորոգման բրիգադի անդամներից յուրաքանչյուրի կատարած աշխատանքի արդյունքները:</p>
---------------------------------------	---

<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • ընտրված են աշխատանքային մեթոդները և տեխնոլոգիաները. • ձեռքբերված են բոլոր անհրաժեշտ սարքավորումները, գործիքները և անհրաժեշտ նյութերը. • պահպանված են աշխատատեղերի սանիտարական նորմերը. • պահպանված են աշխատանքային պայմանների հիգիենայի նորմերը. • պահպանված են գործիքների և մեքենա-սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները. • ամփոփված է կատարված աշխատանքի արդյունքը՝ որակի համապատասխան գնահատմամբ. • մատնանշված են առկա թերությունները, որոնք ենթակա են
-----------------------------------	---

	անհապաղ վերացման (շտկման):
Խնդիրների բնագավառ 3. Չափանշում և նախագծում	
Աշխատանքային գործընթացը	Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման փականագործը (գազափականագործը) կատարում է գազասարքավորումների տեղակայմանը և հավաքակցմանը նախորդող գծային ու անկյունային չափումներ՝ դրանց արդյունքների հիման վրա կազմելով աշխատանքային գծագրեր:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • ընտրված է գազասարքավորման տեղակայման տեղամասը. • կատարված են համապատասխան գծային չափումները. • կատարված են համապատասխան անկյունային չափումները. • չափումների արդյունքների հիման վրա կազմված է նախնական աշխատանքային գծագիրը. • գազատար խողովակագծերը նախագծված են տեխնիկական նորմերին ու տեխնոլոգիական պահանջներին համապատասխան. • ընտրված են գազահաշվիչի և գազաազդանշանային սարքի տեղակայման տեղամասերը:
Խնդիրների բնագավառ 4. Աշխատանքային ռեսուրսների կառավարում	
Աշխատանքային գործընթացը	Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման փականագործը (գազափականագործը) կազմում ու վերահսկում է իրեն ենթակա նորոգող բրիգադի անդամների աշխատանքային գրաֆիկը, կատարում է աշխատանքի բաժանում, դիմում է վերադասին իրեն ենթակա բրիգադի անդամներին խրախուսելու կամ պատժելու, ինչպես նաև վերապատրաստման անհրաժեշտության առաջարկներով և ապահովում է առողջ աշխատանքային փոխհարաբերություններ:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • կազմված են ու վերահսկվում են բրիգադի անդամների աշխատանքային գրաֆիկները. • կատարված է աշխատանքի ճիշտ և արդյունավետ բաժանում. • կազմված է բրիգադի անդամների հաստիքացուցակը.

	<ul style="list-style-type: none"> • իրականացված են ենթակա նորոգող բրիգադի անդամների խրախուսելու կամ պատժելու միջոցառումները. • ցուցաբերված է բրիգադի անդամների վերապատրաստմանը միտված օժանդակությունը. • ապահովված է առողջ աշխատանքային միջավայրը:
--	--

Խնդիրների բնագավառ 5. Անսարքությունների բացահայտում և դրանց պատճառների վերացում

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման փականագործը (գազափականագործը) գազասարքավորումների տեսակին, տիպին և դասին համապատասխան՝ ստուգում է դրանց աշխատանքային ընթացքը, շահագործման տեխնիկական նորմերն ու պահանջները, ուրվագծում է հնարավոր անսարքությունները և դրանց ենթադրվող պատճառները, հստակեցնում և հիմնավորում է գլխավոր անսարքությունները՝ ձեռնարկելով դրանք վերացնելուն ուղղորդված գործողություններ:</p>
---------------------------------------	---

<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • կատարված են ստուգումներն՝ ըստ գազասարքավորումների տեսակի, տիպի և դասի. • առանձնացված են գազասարքավորումների աշխատանքային թերությունները. • ուրվագծված են գազասարքավորումների շահագործման տեխնիկական նորմերի և պահանջների խախտումները . • բացահայտված ու հստակեցված են գազասարքավորումների անսարքությունները, թերություններն ու վնասվածքները. • վերացված են բոլոր հնարավոր անսարքությունները. • ախտորոշված է գազասարքավորման խափանման գլխավոր պատճառը:
-----------------------------------	--

Խնդիրների բնագավառ 6. Գազասարքավորումների հավաքակցում և շահագործում

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման փականագործը (գազափականագործը) կատարում է ներտնային և արդյունաբերական ձեռնարկությունների գազ օգտագործող սարքավորումների հավաքակցման (մոնտաժման), տեղակայման</p>
---------------------------------------	--

	<p>ու շահագործման աշխատանքներ:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • կատարված են գազասարքավորումների տեսակին, տիպին ու դասին համապատասխան հավաքակցման աշխատանքները. • ստուգված են գազասարքավորումների աշխատանքային ռեժիմները. • կատարված են գազասարքավորումների տեսակին, տիպին ու դասին համապատասխան տեղակայման աշխատանքները. • կատարված են տեղակայումից հետո անհրաժեշտ համալրման բոլոր աշխատանքները. • գազասարքավորումները հանձնված են շահագործման. • ստուգված է գազասարքավորման անխափան և անվտանգ աշխատանքային ընթացքը:
<p>Խնդիրների բնագավառ 7. գազասարքի փորձարկում</p>	<p>Գազասարքավորումների նորոգում և վերանորոգված</p>
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման փականագործը (գազափականագործը) նորոգում է վնասված գազասարքավորումը, տարանջատում է շարքից դուրս եկած պահեստամասերն ու հանգույցները, դրանք փոխարինում է նորերով՝ կատարելով վերանորոգված գազասարքի փորձարկում:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • ախտորոշված են գազասարքավորման վնասվածքները. • վնասված պահեստամասերն ու հանգույցները ապահավաքակցված են՝ պահպանելով տեխնոլոգիական հաջորդականությունն ու սահմանված ռեժիմները. • նոր պահեստամասերի ու հանգույցների ընտրության ժամանակ պահպանված են դրանց աշխատանքային համադրելիության սկզբունքները. • նոր պահեստամասերն ու հանգույցները տեղադրված են՝ պահպանելով տեխնոլոգիական հաջորդականությունն ու սահմանված ռեժիմները. • փորձարկված է նորոգված գազասարքավորումը. • ապահովված է նորոգված գազասարքավորման անխափան և անվտանգ աշխատանքային ռեժիմը:

Խնդիրների բնագավառ 8. Գազասպառողներին խորհրդատվության տրամադրում	
Աշխատանքային գործընթացը	Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման փականագործը (գազափականագործը) գազասպառողներին տրամադրում է անվճար խորհրդատվություն՝ գազասարքավորումների շահագործման անվտանգության նորմերի և կանոնների վերաբերյալ:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • գազասպառողներին տրամադրված է անհրաժեշտ խորհրդատվությունը. • գազասպառողները տեղեկացված են գազասարքերը միացնելու և անջատելու կանոններին. • գազասպառողները տեղեկացված են գազասարքերը շահագործելու անվտանգության նորմերին և կանոններին. • գազասպառողները տեղեկացված են գազահաշվիչների ցուցիչներին ու գազաազդանշանային սարքերի աշխատանքին հետևելու կանոններին. • գազասպառողները տեղեկացված են գազասարքերի անսարքությունների հայտնաբերման դեպքում գազամատակարար կազմակերպությանը դիմելու և ահազանգելու կարգին:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման փականագործը (գազափականագործը) պատասխանատու է.</p> <ul style="list-style-type: none"> • նախագծային չափումների և հաշվարկների համար. • գազասարքավորումների ճիշտ հավաքակցման ու տեղակայման համար. • գազասարքավորումներն անվտանգ շահագործման հանձնելու համար. • գազասարքավորումների անսարքությունները ճիշտ ախտորոշելու համար. • գազասարքավորումները որակով նորոգելու համար. <p>գազասպառողներին մատչելի և հասկանալի խորհրդատվություն տրամադրելու համար:</p>
IV. Լեզուները	<ul style="list-style-type: none"> • հայերեն՝ գերազանց. • մեկ օտար լեզու՝ բավարար.
V. Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> • Microsoft Word՝ բավարար.

<p>VI. Գիտելիքները</p>	<ul style="list-style-type: none"> • Internet Explorer՝ բավարար. <p>Պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> • գազի տնտեսության կառուցվածքն ու բաղադրիչները. • տեխնիկական գրաֆիկա. • էլեկտրատեխնիկայի հիմունքներ. • նյութագիտություն. • չափագիտություն. • փականագործության տեխնոլոգիա. • նախագծում. • հատակագծում. • նորմավորում. • գազիֆիկացում. • կենսագործունեության անվտանգություն:
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<ul style="list-style-type: none"> • նոր մոնտաժվող գազամատակարարման ու գազասպառման համակարգերի, ինչպես նաև գազօգտագործող սարքերի անսարքությունների վերացման համար անհրաժեշտ նյութերն ընտրելու կարողություն. • նոր մոնտաժվող գազամատակարարման ու գազասպառման համակարգերի, ինչպես նաև գազօգտագործող սարքերի անսարքությունների վերացման համար անհրաժեշտ նյութաձախսի հաշվառման կարողություն. • գործիքներն ու սարքավորումները նպատակային օգտագործելու հմտություն. • տեղեկատու գրականությունից օգտվելու կարողություն. • գծագրերն ու սխեմաները կարդալու հմտություն. • գազամատակարարման ու գազասպառման համակարգերի սարքերը ստուգելու և դրանց անսարքությունները հայտնաբերելու հմտություն. • գազամատակարարման ու գազասպառման համակարգերի սարքերն ապամոնտաժելու հմտություն. • գազամատակարարման ու գազասպառման համակարգերի սարքերը կարգաբերելու կարողություն. • գազի սպառողներին հրահանգավորելու և մասնագիտական խորհրդներ տալու կարողություն. • գազամատակարարման ու գազասպառման համակարգերի վթարային իրավիճակներում արագ կողմնորոշվելու

	կարողություն:
VIII. Անձի որակական հատկանիշներ	Պարկեշտ, անկաշկանդ, պարտաճանաչ, պատասխանատու, պահանջկոտ, խնայող, կարգապահ, հաղորդակցվող, ճշտապահ, մաքրասեր, տեղեկացված, համեստ, հարգալից, նորարար, արագ կողմնորոշվող, սառնասիրտ, ընկերասեր: